

Հասարակական գիտությունների ֆակուլտետի հնգամյա զարգացման հայեցակարգ

Հասարակական գիտությունների ֆակուլտետը ձևավորվել է 2020 թվականին ՎՊՀ կառուցվածքային փոփոխությունների շրջանակներում: Ֆակուլտետն իր կազմում ներառում է Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման, մանկավարժության և հոգեբանության, ինչպես նաև արվեստի և սպորտի ամբիոնները: Ֆակուլտետը կազմավորվել է նախկին Պատմաաշխարհագրական, Մանկավարժության, Կենսաբանաքիմիական և Բանասիրական ֆակուլտետների հասարակագիտական ուղղվածության մասնագիտությունների հիման վրա:

Ֆակուլտետի բակալավրի առկա համակարգում գործում են 11 մասնագիտություններ, հեռակա համակարգում՝ 9: Մագիստրատուրայի առկա համակարգում գործում են 2, հեռակայում 1 մասնագիտություններ: 2022-2023 ուսումնական տարում մագիստրատուրային կավելանան ևս երկու մասնագիտություններ:

Բակալավրիատի առկա համակարգում սովորում են 551 ուսանող, հեռակա համակարգում՝ 283: Մագիստրատուրայում ընդհանուր ուսանում են 36 մագիստրանտներ, որոնցից 17-ը առկա համակարգում և 19-ը հեռակա համակարգում:

Ֆակուլտետի հնգամյա ռազմավարություն մշակելու համար նպատակահարմար ենք գտնել սկսել գործընթացը SWOT վերլուծությունից: Վեր են հանվել հիմնական գործոնները, որոնք ազդում են ֆակուլտետի մրցունակության և պլանավորվող ժամանակաշրջանում դրա ռազմավարական նպատակադրման և նպատակների իրականացման վրա:

Որպես ուժեղ կողմեր գնահատվել են հետևյալ գործոնները

1. Ֆակուլտետի չափերը
2. Մասնագիտությունների մրցունակությունը
3. Մասնակցային կառավարման մոտեցումների ամրապնդման տենդենցները
4. Կառուցվածքային ստորաբաժանումների կայացվածությունը
5. Ուսանողական ինքնակազմակերպման մակարդակը
6. Փոփոխությունների պատրաստակամությունը

Որպես թույլ կողմեր ախտորոշվել են.

1. Գործառույթների և ռեսուրսների անհամապատասխանությունը

2. Ավանդույթների ձևավորման և համագործակցության սկզբնական փուլում գտնվելը
3. Գործառույթների, լիազորությունների և պարտականությունների բաժանման մեջ որոշակի անհամապատասխանությունները
4. Ինքնուրույն ֆինանսական որոշումներ կայացնելու հնարավորության բացակայությունը

Մեր գնահատմամբ ֆակուլտետի համար պլանավորվող ժամանակաշրջանում բարձր հավանական են արտաքին միջավայրի այնպիսի փոփոխությունները, որոնք իրենց մեջ կպարունակեն հետևյալ հնարավորությունները և սպառնալիքները.

Հնարավորություններ

1. Բուհական համակարգում համընդհանուր պետական կրթական չափորոշիչների սահմանումը
2. Մրցակից մասնագիտություններով բուհերում առկա ուսուցմամբ համակարգի վերացումը
3. Հավատարմագրման չափորոշիչների խստացումը
4. Տնտեսության ճյուղային կառուցվածքում ֆակուլտետի մասնագիտական ճյուղերի առաջանցիկ զարգացման արդյունքում աշխատանքի շուկայում պահանջարկի աճը

Սպառնալիքներ

1. Ժողովրդագրական իրավիճակի սրում
2. Սոցիալական իրավիճակի սրում
3. Մասնաճյուղերի բացման արդյունքում մրցակցության սրում
4. Քաղաքական ռիսկեր

Հիմք ընդունելով ֆակուլտետի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները՝ կազմվել են միջոցառումների պլան առաջակա 5 տարիներին առաջանցիկ զարգացում ապահովելու և գործունեությունը կատարելագործելու համար:

Կազմակերպակառավարչական և հսկման ոլորտի բարելավում

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի աշխատանքները ավելի ընդգրկուն դարձնելու և մասնակցային կառավարման արմատավորման համար խորհրդին կից մշտական և ժամանակավոր հանձնաժողովների և աշխատանքային խմբերի ստեղծում:

2. Կրթական ծրագրերով նախատեսված դասախոսությունների, գործնական և լաբորատոր պարապմունքների պատշաճ անցկացման ուղղությամբ վերահսկողական մեխանիզմների մշակում և ներդրում
3. Դասացուցակների կազմման ներառական մեխանիզմների ներդրում
4. Ստուգարքային, քննական տեղեկագրերի կազմման և հաստատման ուղղությամբ վստահության մեխանիզմների մշակում և ներդրում
5. Հեռավար դասընթացների կազմակերպման գործիքակազմի ընդլայնում
6. Ուսանողների ուսման վարձի զեղճման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքման, ստուգման, ներկայացման և արդյունքների վերաբերյալ շահառուներին տեղեկացման ուղղությամբ թափանցիկ համակարգի մշակում և ներդրում, ուսման վարձի զեղչերի մրցույթների պարամետրերի մեջ փոփոխությունների և լրացումների նախաձեռնում
7. Ուսանողների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման, բացակայությունների և ակադեմիական պարտավորությունների կատարման վրա հսկողության իրականացման և տեղեկատվության տրամադրման մեխանիզմների բարելավում

Կրթական գործընթացի բարելավմանն ուղղված միջոցառումներ

1. Համակարգչային և ինտերակտիվ գրատախտակներով հագեցած լսարանների թվաքանակի աճի միջոցով դասապրոցերի մեջ ինտերակտիվ մեթոդներով կազմակերպվող դասընթացների, գործնական և լաբորատոր աշխատանքների, արտալսարանային պարապմունքների քանակի էական աճ
2. Ուսումնական պլանների և փաթեթների անընդհատ վերանայում և թարմացում
3. Դասալսումների, փորձի փոխանակության միջոցառումների, երիտասարդ դասախոսներին առաջնորդության և ուղղորդման մեխանիզմների ակտիվացում
4. Անցում միահերթ դասապրոցեսի

Դասախոսական համակազմի վերապատրաստման, կարողությունների աճին և զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում

1. Ֆակուլտոտի դասախոսների համար մասնագիտական վերապատրաստման և կարողությունների զարգացմանն ուղղված դասընթացների և որակավորման կուրսերի կազմակերպում
2. Օտար լեզուների ուսուցման և հմտությունների զարգացման կուրսերի կազմակերպում
3. Մասնագիտական վերապատրաստման գործուղումների մեխանիզմների ներդրման առաջարկությունների մաշակում և համահամալսարանական մակարդակով քննարկումների նախաձեռնում
4. Երիտասարդ դասախոսների համար դասավանդման մեթոդիկայի, լսարանային աշխատանքի հմտությունների ուղղությամբ փորձի փոխանակության քննարկումների կազմակերպում ամբիոնային և ֆակուլտետային մակարդակում
5. Լավագույն դասախոս, լավագույն գիտական նվաճում ունեցած աշխատակից, ուսանողների համակրանք վայելող դասախոս մրցությունների կազմակերպում և իրականացում:
6. Դասախոսների շրջանում ռեյտինգային համակարգի մշակման աշխատանքների նախաձեռնում

Միջավայրի բարելավմանն ուղղված գործողություններ

1. Ֆակուլտետի լսարանային ֆոնդի ավելացմանն ուղղված առաջարկությունների ներկայացում, որը հնարավորություն կտա դասապրոցեսը կազմակերպել մեկ հերթով
2. Ինտերակտիվ սարքավորումներով հագեցած լսարանների թվի ավելացում
3. Համալսարանի գլխավոր մասնաշենքի առաջին և երկրորդ հարկի ֆոյեների վերանորոգում, դիզայներական լուծումների և գույքային հագեցվածության շնորհիվ կիրառական և հարմարավետ միջավայրի ստեղծում
4. Դասախոսական սենյակների թվաքանակի և հագեցվածության ավելացում

Ուսանողական միջավայրի, ինքնակազմակերպման, գիտական և կազմակերպչական ակտիվության խրախուսման միջոցառումներ

1. Ֆակուլտետի ուսանողական խորհրդի աշխատանքներին աջակցություն և ուսանողական նախաձեռնությունների խրախուսում
2. Ֆակուլտետում մասնագիտական ուղղվածության ուսանողական ինքնակազմակերպված ակումբների ստեղծմանն աջակցություն
3. Ուսանողական գիտական ընկերության գործունեության աջակցություն
4. Ուսանողների հետ գիտական, ստեղծագործական, ձեռնարկատիրական նախագծերի նախաձեռնում և աջակցություն
5. Միջբուհական ուսանողական շփումների և կապերի խրախուսում, աջակցություն
6. Ուսանողների կողմից մասնագիտական թեմաներով շրջայցերի, այցելությունների, էքսկուրսիաների և ճանաչողական ուղևորությունների աջակցություն և խրախուսում
7. Ուսանողական ավանդական միջոցառումների մշակում, առաջնորդում և անցկացում
8. Ուսանողական մշակութային խմբակների, սպորտային թիմերի և խմբերի, արշավային և այլ ակումբների գործունեության կազմակերպում և աջակցություն

Մոցիալ մշակութային գործունեություն

1. Հասարակական գիտությունների ֆակուլտետի օր ամենամյան միջոցառման ներդրում
2. Հասարակական գիտությունների ֆակուլտետի լավագույն ուսանող, լավագույն նկար, լավագույն մարզիկ մրցույթների կազմակերպում, անցկացում և հանդիսավոր պարգևատրում
3. Մասնագիտական տոների առիթով միջոցառումների կազմակերպում
4. Ներֆակուլտետային սպորտային մրցումների կազմակերպում

Տ.գ.թ., դոցենտ՝



Հ. Պապոյան